

ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ 36-ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԱԵԽ-ի 36-րդ Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ 26-30 Յուլիս 1992-ին, Մելպոնն Համալսարանի Օրմօնտ Քոլեջի մէջ:

Ժողովին մասնակցեցան 13 անդամ եկեղեցիներու Հոգեւոր Առաջնորդներ, ներկայացուցիչներ, դիտորդներ ու հիւրեր, քիւով 150 հոգի:

Ուրաք երեկոյեան, ԱՌԱՋԻՒԹԱՆ Ա. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած եկեղեցական արարողութեամբ, քացումը կատարուեցաւ ժողովին:

Շարաք առաւտեան եկեղեցական արարողութիւնը վերապահուած էր Հայց. Առաքելական եկեղեցւոյ, ուր Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Առաջնորդ Գերշ. Տ. Աղան նպս. Պալիօզեան, իր կողմին ունենալով Յակոր եւ Ասոդիկ Քահանայ Հայրերը եւ դպիրներ, կատարեցին Արեւագալի արարողութիւնը, աղօքները մատուցանելով անգլերէն լեզուով:

Եկեղեցական արարողութեան ետք, ժողովը անցաւ իր օրակարգին: Նոյն երեկոյեան Վեր. Տեք. Կունքը Կասմըն գլխաւոր բանախօսն էր. խօսեցաւ "Միութիւնը որ կը ցանկանք" Շիւրին շուրջ:

Ժողովը իր աւարտին հասաւ Երեքշարքի ՅՈՅՈՒԹԻՒՆ: Վեր. Խան Ալլոսի ընտրուեցաւ ԱԵԽ-ի նախագահ, յառաջիկայ երկու տարիներու համար:

Առաջնորդ Ս. Հայրը, երեք կարեւոր յանձնախումբերու վարչական անդամ դարձաւ: Խոկ Տիկին Ազնիւ Խոկեմտէրեան՝ Սիտնիէն, եւ Տիկ. Շուշան Պօյանեան՝ Փըրքն, ընտրուեցան կանաց յանձնախումբի վարչական անդամներ:

Առաջնորդ Ս. Հօր առաջարկութեամբ ժողովը ընդհանուր միաձայնութեամբ

որդեգրեց հետեւեալ երկու որոշումները..

1.- Հաղորդակցիլ Նորին Սրբութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կարողիկոսին հետ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, եւ արտայայտել քարի մաղթանելներ՝ Հայաստանի եկեղեցին, ժողովուրդին եւ կառավարութեան, ազատութեան եւ մարդկային իրաւաց համար իրենց պայքարներուն մէջ, ի հետեւանս լեռնային Ղարապաղի (Արցախի) մասին ստեղծուած վէճներու եւ տարակարծութեանց:

2.- Խնդակցութիւն յայտնել եկեղեցայ եւ հոգեւոր արժէքներու մասին վերանորոգուած վստահութեան համար, հակառակ տնտեսական եւ բաղական խիստ դժուարութեանց:

Առաջնորդ Ս. Հայրը Մելպոնն գտնուած օրերուն, իր ազատ ժամերը յատկացուց եկեղեցւոյ ու գաղութի ձեռնարկներուն:

Շարաք երեկոյեան ներկայ եղանակուած տարեկան պարահանդէսին, նուիրուած հայրենիքին:

Կիր. 29 Յուլիսին, պատարագեց ու քարոզեց Մելպոննի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Վեր. Տեք. Կունքը Կասմըն ներկայ եղանակուած Սուրբ Պատարագին ու անգլերէն լեզուով խօսեցաւ ներկայ հաւատացելոց:

Ցաւարտ Ս. Պատարագի ծերունագարդ Վահրամ Երեցեան իր ծննդեան 100-ամեակին առիբով արժանացաւ Վեհափառ Հայուապահի Օրինութեան Գիրին:

Եշ. 25 Յուլիս 1992ին, Մելպոննի ԱՌԱՋԻՒԹԱՆ Արքապիսկոպոսարամին մէջ, տեղի ունեցաւ Աւստրալիոյ Հոգեւոր Առաջնորդներու միօրեայ ժողովը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Առաջնորդ Ս. Հայրը:

Ժողովը զբաղեցաւ Կրօնական, Ընկերային, Բարոյական ու Գաղթականաց հարցերով:

Ուր. 26 Յուլիսին, ԱԵԽ-ի Հաւատք եւ Կարգ Յանձնախումբը միօրեայ Սեմինար մը կազմակերպած էր, ուր գլխաւոր քանախուն էր Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Հաւատք եւ

Կարգ Յանձնախումբի Ատենապետ, Վեր. Տոփք. Կունքը Կասմըն: Ան խոսցաւ "Եկեղեցւոյ միուրիւնը" նիւրին շուրջ:

Առաջնորդ Ս. Հայրը ներկայ եղաւ ու ներկայացուց Ռոդափառ Եկեղեցիներու եւ յատկապէս Հայց. Առաքելական եկեղեցւոյ ըմբռնումը Հաւատք եւ Կարգ հարցերու շուրջ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երրուսաղեմի Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոն Արք. Մանուկեան, իր Միարամակից եղբայրներուն հաղորդած է հետեւեալ տեղեկութիւնը, Ժըմեկի դրամատան մէջ Պատրիարքարանի անունով եւ հանգուցեալ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի ստորագրութեամբ քացուած հաշիւը, նախորդ Պատրիարք Եղիշէ Տէրտէրեան ստորագրութեամբ, անձնական եւ անհատական հաշիւ է, եւ դրամատան ներքին օրէնքներուն համաձայն չեն կրնար որեւէ տեղեկութիւն տալ կամ ուրիշ անունի փոխանցել:

Միարանակից եղբայրներուն,

Անցնող տարիներու ընթացքին հետամուտ եղանք Զուիցերիոյ ժըմեկ քաղաքի դրամատան մէջ Պատրիարքարանի անունով քացուած հաշիւները ստուգելու, զանոնք Պատրիարքարանիս անունին փոխանցելու համար: Սակայն դրամատան պատասխանատուները մերժեցին փոխանցումը կատարել, առարկելով որ իրենց դրամատան մէջ քացուած հաշիւը, նախորդ Պատրիարք Եղիշէ Տէրտէրեան ստորագրութեամբ, անձնական եւ անհատական հաշիւ է, եւ դրամատան ներքին օրէնքներուն համաձայն չեն կրնար որեւէ տեղեկութիւն տալ կամ ուրիշ անունի փոխանցել:

Մենք պնդեցինք որ Պատրիարքարանիս անունով եւ Եղիշէ Տէրտէրեան Պատրիարքի ստորագրութեամբ քացուած հաշիւը անձնական չէ, եւ մենք նոյն հաշիւը կը պահանջնենք շարունակել եւ յաջորդ Պատրիարքին անունով արձանագրել:

Սուրբ Եջմիածնեն մեր վերադարձին, 1992 Մայիս 21-24, ժըմեկ այցելեցինք գլխաւորաբար այս նպատակով: Ըստ նախապէս եղած կարգադրութեանց եւ ժամադրութեանց, ժըմեկի մէջ մեզի ընկերացաւ Երրուսաղեմի Պատրիարքարանիս փաստաբանը: Օրինական փաստաբուղթերը եւ հաստատագրերը ներկայացուեցան դրամատան վարիչներուն որոնք ընդունեցին փոխանցման գործողութիւնները կատարել, եւ մեր ներկայութեան եւ ստորագրութեամբ այդ հաշիւը փոխանցուեցաւ Պատրիարքարանիս եւ Պատրիարքին անունին:

Այդ հաշիւն մէջ չնշին գումար մը մնացած է, երեսուն մէկ Ամերիկան Տոլար:

1989 տարւոյ վերջին ամիսներուն, տասնեակ հազարներով "Cash" գումարներ գանձուած են, չենք գիտեր որո՞ու ստորագրութեամբ եւ ի՞նչ նպատակներու համար: Զնշել տուինք անունը այն անձին որուն լիազօրութիւն տրուած էր նոյն հաշիւնը գանձումներ կատարելու:

Այս հարցին կապակցութեամբ ապագային կը տեղեկագրենք երբ յաւելեալ տեղեկութիւններ կարելի դառնայ ձեռք բերել: